

ՏԵՐՈՒՆԻ**ՀԱՆԳԻՍՏ**

**ՀՈԳՇ. Տ. ՀԱՄԲԱՐՁՈՒՄ ՎԱՐԴԱՊԵՏ ՔԷՇԻՇԵԱՆԻ
(1958-2019)**

Ս. Յակոբեանց Միաբանութիւնը վիշտն ունեցաւ կորսնցնելու իր ծառայասէր Միաբաններէն Ս. Աթոռոյս Աւագ Թարգման՝ Հոգեշնորհ Տ. Համբարձում Վրդ. Քէշիշեանը:

Հանգուցեալը՝ աւագանի անունով Հրաչ, ծնած էր Պէյրութ՝ 1958-ին:

1972-1978 տարիներուն ուսանած էր Պատրիարքութեանս Ժառանգաւորաց Վարժարանի եւ Ընծայարանի մէջ:

1978-ին ձեռամբ՝ Գերշ. Տ. Շահէ Արք. Աճէմեանի ձեռնադրուած էր Սարկաւագ:

1979-ի Յունուարին ձեռամբ՝ այդ օրերու Ռոմանիոյ եւ Պուլկարիոյ թեմերու Առաջնորդ՝ Գերշ. Տ. Տիրայր Արք. Մարտիկեանի ձեռնարդուած էր կուսակրօն արեղայ:

1984-ին ստացած էր մասնաւոր վարդապետութեան աստիճան:

Իր բազմամեայ ծառայութեան ընթացքին լուսահոգի Հայր Սուրբը եղած էր գաւազանկիր, Ս. Աթոռոյս մատակարար, Ս. Աթոռոյս Աւագ Թարգման: Քանիցս ընտրուած էր Տնօրէն Ժողովի անդամ:

Հանգուցեալին մարմինը Մայր Տաճար փոխադրուեցաւ 12 Մարտ, 2019-ին, երեկոյեան ժամերգութեան աւարտին, շարականներու երգեցողութեամբ դագաղը զետեղուեցաւ Ս. Յակոբեանց Մայր Տաճարի ատեանին մէջ: Յաջորդ օրը՝ 13 Մարտ, 2019-ին, Մայր Տաճարի Աւագ Սեղանին վրայ հանգստեան Ս. Պատարագ մատուց Հոգշ. Տ. Գէորգ Աբղ. Հայրապետեան: «Ողջոյն»-էն առաջ դագաղը բեմ հանուեցաւ, ուր Սուրբ Աթոռոյս Գահակալ՝ Ամենապատիւ Տ. Նուրհան Արք. Մանուկեան Պատրիարք

Սրբազան Հայրը կատարեց Վերջին Օծումը եւ խօսեցաւ դամբանականը, դրուատելով քառասուն տարիներու եկեղեցասէր գործունէութիւնը հանգուցեալին, որմէ ետք նախ Միաբանութիւնը եւ ապա ժողովուրդը մօտեցաւ աջը առնելու հանգուցեալին:

Ժամը 10:30-ին Մայր Տաճարին մէջ կատարուած հանգստեան կարգէն ետք կազմուեցաւ թաղմանական թափօրը, մասնակցութեամբ ամբողջ Միաբանութեան, հոգեւոր երգերով եւ հանգստեան Աւետարաններու ընթերցմամբ առաջնորդելու հանգուցեալը իր յաւիտենական կայքին: Յուղարկաւորութեան արարողութեան նախագահեց Լուսարարապետ՝ Գերշ. Տ. Սեւան Արք. Ղարիպեան:

Հայր Համբարձումի մարմինը ամփոփուեցաւ Ս. Փրկչի Միաբանական գերեզմանատան մէջ:

ԱՄԵՆԱՊԱՏԻ ՊԱՏՐԻԱՐՔ ՍՐԲԱԶԱՆ ՀՕՐ ԿՈՂՄԷ ԽՕՍՈՒԱԾ ԳԱՄԲԱՆԱԿԱՆԸ Ի Ս. ՅԱԿՈՔ

Սուգի մէջ է Առաքելական Ս. Աթոռը եւ Սրբոց Յակոբեանց Միաբանութիւնը, ինչպէս նաեւ սուգի մէջ են հանգուցեալ, սակայն միշտ սիրելի Հայր Համբարձումին ընտանեկան պարագաները:

Ըսուած է, «Մահը որոշ է, բայց ժամը անորոշ», եւ ահա՛ այս անորոշ ժամն է, որ այսօր մեր Զինուորեալ Միաբանութեան անդամները հաւաքած է այս դագաղին շուրջ, ուր կը հանգչի մարմինը յաւիտենական քունի անցած Աթոռիս Աւագ Թարգմանին, որ եղաւ իրա՛ւ պահակը պատնէշին վրայ գտնուող, որուն հետեւանքով ալ սրտի տագնապով ան պիտի կորսնցնէր իր կեանքը, տակաւին հազիւ 60 գարուններ բոլորած:

Ան թէեւ ուսումնական կամ մտաւորական մը չեղաւ, սակայն միշտ մնաց գիտակից իր պարտականութիւններուն, պաշտօններուն եւ դիրքին, առանց օգտագործել փորձելու այս վերջին երկուքը: Հակառակ իր առողջական խախտած վիճակին եղաւ նուիրեալ ու պարտաճանաչ եկեղեցականը, որ գիտցաւ մարդկային բոլոր հաճոյքներէն վեր դասել իր պարտականութիւններն ու կոչումը, միշտ ներկայ ըլլալով մեր միաբաններէն ակնկալուած ժամերգութիւններուն եւ արարողութիւններուն: Ան քաջատեղեակ էր այս արարողութիւններու կարգին ու ձեւին թէ՛ Ս. Յակոբէներս եւ թէ՛ սրբատեղիներու մէջ, բան մը որ դժբախտաբար այս օրերուն կը պակսի մեր Միաբանութեան անդամներուն: Հայր Համբարձումի անժամանակ մահով Պատըրիարքութիւնս կը կորսնցնէ իր կոչումին գիտակից, նուիրեալ ու ծառայասէր Միաբանը, որ միշտ գիտցաւ վեր դասել իր պարտականութիւններն ու Աթոռին շահերը իր անձնական հաճոյքներէն, նախասիրութիւններէն եւ շահերէն:

Հայր Համբարձում՝ աւազանի անունով Հրաչ, ծնած էր Պէյրութ, Լիբանան, սակայն Երուսաղէմը ըրած էր իր վերջնական բնակարանը: Ան 1979 թուին այդ օրերու Ռումանիոյ եւ Պուլկարիոյ հանգուցեալ Առաջնորդ՝ Տիրայր Արք. Մարտիկեանի ձեռամբ կը դառնար կուսակրօն եկեղեցական, որմէ ետք ամբողջ քառասուն տարիներ իր կեանքը բոլորանուէր կերպով պիտի տար այս Աթոռին, մի՛շտ ըլլալով պարտաճանաչ եւ գիտակից իր կոչման: Իր բազմամեայ ծառայութեան տարիներուն Հայր Սուրբը ստանձնած է գաւազանակրութեան, մատակարարութեան եւ Աւագ Թարգմանի պաշտօնները: Քանիցս ան ընտրուած է նաեւ Աթոռոյս Տնօրէն Ժողովի անդամ: Իր անժամանակ մահով Պատրիարքութիւնս կը կորսնցնէ իր պարտականութիւններուն նուիրեալ եկեղեցականը, որ գիտցաւ «գոյիւ չափ» բերել իր օգուտն ու մասնակցութիւնը